أريف
جريدة عربية باللغة الأرمنية
٣ شارع سليمان الحلبي / القاهرة ج.م.ع
ص.ب ١٠٦٠ - تليفون ٥٨٧٠٣

AREV" Quotidien Arménien
, Rue Soliman El-Halabi, Le Caire, Egypte
oîte Postale 1060 - Téléphone 58703
dr. Télégr. : "JOURAREV" Le Caire

ԱՐԵՎ

ՕՐԱԹԵՐԹ

ՇԱԲԹԻ 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1976 ՅՈՒԴ ՏԱՐԻ ԹԻՒ 17·493 ՀԱՏԸ 25 ՄԻԼԻԷՄ



ՀԱՅՐԵՆԻ ՊՐՈՖԵՍՈՐԸ ԱՄՆ-ՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ

Օգոստոսի 16ից 20ը Թեքսաս նահանգի Լուպպոք քաղաքում կայացաւ աղի ջրերի ոռոգման միջազգային կոնֆերանս։

Կոնֆերանսին մասնակցեց Հայաստանի Հողագիտութեան և Ագրոքիմիայի Գիտահետազօտական Ինստիտուտի դիրեկտոր դոկտոր-պրոֆեսոր Հրանդ Գետրոսեանը։ Նրա զեկուցման թեման էր «Արարատեան դաշտավայրի ազուտ հողերի իւրացման և ոռոգուած ջրերի օգտագործման մասին»։

Հայրենի հիւրը մի շարք անգամներ եղել է աշխարհի տարբեր երկրներում՝ ԱՄՆ-ում եղել է 1967 թուականին, Ֆրանսիա, Հոլանդիա, Անգլիա, Կուբա, Եգիպտոս և մի շարք այլ երկրներ։

Հրանդ Գետրոսեանը հանդիսանում է ՍՍՌՄ Հողագիտութեան ընկերութեան փոխ նախագահը, սփիւռքահայութեան հետ Մշակութային Կապի Կոմիտէի պատուոյ անդամ։

Ընդամէնը մէկ և կէս տարեմտակ է ինչ Հայաստանում ստեղծուեց Հողագիտութեան և Ագրոքիմիայի գիտահետազօտական ինստիտուտը։ Ինստիտուտի կոլեկտիվի ժրաջան աշխատանքի շնորհիւ զգալի յաջողութիւնների են հասել։ Այստեղ մշակուած է պրոգրեսիվ մեթոդ քիմիական թափուկները (մնացորդները) օգտագործելու միջոցով։ Հայաստանի ազուտ հողերը բերրիացուում են և պիտանի դառնում մշակելու։

Պրոֆիսոր Գետրոսեանը դէպի Թեքսաս գնալու ճանապարհին երկու օր Նեց Նիւ Եորք, եղաւ մի շարք տեսարժան վայրեր, այցելեց ՄԱԿ-ի շէնքը, և զրոյց ունեցաւ արաբական երկրների լրագրող Լեւոն Փէշիշեանի հետ։

Նկարում, դոկտոր-պրոֆեսոր Հրանդ Գետրոսեանը ՄԱԿ-ի Անվտանգութեան Խորհուրդի դահլիճի մուտքի մօտ։

Լուսանկարը և Ճարտարանքը
ԿԱՐԳԻՍ ՊՕՂՈՍԵԱՆԻ